ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվարի 2025 թվականի N 283-Ա

ՎԱՐԴԱՆ ՀՐԱՆՏԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-088-0010-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 135-րդ և 202-րդ հոդվածներով, անձնագրերի պատճենը, սեփականության իրավունքի N 13072015-06-0019 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, Շնող գյուղի վարչական ղեկավարի կողմից 23.01.2025թ. տրված N 317 տեղեկանքը՝

որոշում եմ.

1.Օրինականացնել Վարդան Հրանտի Մեհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Շնող գյուղ, 12-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող, 06-088-0010-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.22684 հա մակերեսով հողամասում, 1999թ. և 2016թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 20243SEDUB ծածկագրով հաշվառված, 165.1 քմ արտաքին մակերեսով (132 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը, 54.5 քմ արտաքին մակերեսով (38.9 քմ ներքին մակերեսով) անասնաշենքը:

2. Ինքնակամ կառուցված շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Օրինականացված բնակելի տան համար սահմանված 122670 (մեկ հարյուր քսան երկու հազար վեց հայուր յոթանասուն) ՀՀ դրամ, օժանդակ շինության՝ անասնաշենքի համար սահմանված 24297 (քսանչորս հազար երկու հայուր իննսունյոթ) ՀՀ դրամ արժեքով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. փետրվարի 07
ք. Ալավերդի